№ 219 Նոյեմբերի 24 (Դեկտեմբերի 6) 1881 Նոյեմբերի 24 (Դեկտեմբերի 6) № 219

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 րուբլ. կէս տարվանը 6 րուբլ։ Առանձին համարները 5 կոպէկով։
Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.
Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի եւ տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողին 2 կոպէկ։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ
„ՄՇԱԿ"
ԱՄԵՆՕՐԵԱՅ ԼՐԱԳԻՐԸ
ԵԿՈՂ 1882 ԹՒԻՆ
(ՏԱՍՆ ԵՒ ՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ)

Կը հրատարակվի նոյն ոգիով և նոյն պրօգրամմայով։

ՊՐՕԳՐԱՄԱ. I. Տէրութեան կարգադրութիւններ, II. Առաջնորդող յօդուածներ, III. Ներքին տեսութիւն, IV. Արտաքին տեսութիւն, V. Խառն լուրեր, VI. Հեռագիրներ, VII. Ֆելիետօն կամ Բանասիրական, VIII. Յայտարարութիւններ։

ԼՐԱԳՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ, 10 րուբլ է, կէս տարվան 6 ր., իւրաքանչիւր ամսին 1 րուբլ։ Հատով համարները 5 կոպէկ։

Գրվել կարելի է խմբագրութեան մէջ հետեւեալ հասցէով. Тифлисъ, редакція «Мшакъ».

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Եզուիտներ Հայաստանում։—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ներքին լուրեր։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ֆրանսիա։ Յունաստան։ Անգլիա։ Նամակ Ֆրանսիայից։ Արտաքին լուրեր։—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։—ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ։—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նամակ Թիւրքիայից։

ԵԶՈՒԻՏՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

—

Մեր Կ. Պօլսի թղթակիցները հաղորդեցին մեզ այն տխրալի լուրը, որ Ֆրանսիայից աքսորված եզուիտները Թիւրքաց Հայաստանն եկան և այդտեղ սկսում են գործել։

Լուսաւորված Եւրոպան, ազատամիտ ֆրանսիական հանրապետութիւնը, փոխանակ օգնելու Թիւրքաց Հայաստանին, ընդհակառակն, ուղարկում են այդ երկիրը այն սարսափելի միաբանութիւնը, որ մինչև անգամ լուսաւորված երկիրների համար վտանգաւոր է ճանաչված։ Եթէ լուսաւորված Ֆրանսիան չը կարողացաւ մրցել եզուիտների հետ, ի՞նչ պէտք է անի խեղճ Հայաստանը այդ զզուելի էակների հետ։

Մենք միշտ պաշտպան էինք և միշտ պաշտպան կը մնանք կրօնի համբերողութեան և խղճի ազատութեան, բայց այդ արդար գաղափարը չէ կարելի այնքան հեռու հասցնել, որ եզուիտներին էլ իրաւունք ճանաչվի ապականել մի երկիր, անբարոյականացնել մի ազգութիւն։

Ինչ կրօն և ընդունեն հայերը,—մեզ համար մի և նոյն է, միայն թէ ազգութեամբ, ոգով, մայրենի լեզուով հայ մնան։

Բայց եզուիտութիւնը նոյն իսկ այն պատճառով վտանգաւոր է, որ նա սպանում է ազգային գաղափարը ամեն ազգի մէջ, թշնամացնում է ազգի անդամներին ազգային գաղափարի դէմ, օտարացնում, խորթացնում է ազգի անդամներին ազգի մեծամասնութիւնից։

Եզուիտութիւնը կրօնապէս համոզված մի աղանդ չէ, այլ մի գաղտնի առևտրական ընկերութիւն, որ կրօնի դիմակով միմիայն մի նպատակ ունի աչքի առջև,—հարստահարել ժողովուրդը և հարստանալ ամեն ներելի, թէ աններելի միջոցներով։

Եզուիտը ինքն ոչինչ կրօն չունի, կամ աւելի լաւ է ասել նրա միակ կրօնը փողն է, բայց արտաքին բարեպաշտութեան դիմակի տակ նա հարստահարում է ժողովուրդը, աղքատացնում է նրան, անհատապէս սպանում, մեռցնում է մարդուն, դարձնում է նրան կրաւորական էակ, ամեն անհատական կամքից զուրկ մի արարած։

Եզուիտական միաբանութիւնը ունի իր ձեռքում միլիօններ և այդ ահագին կարողութիւնը նա ձեռք է բերում ամեն աններելի և յանցաւոր միջոցներով. Նպատակը արդարացնում է միջոցները,—ահա եզուիտական զզուելի դէվիզը։

Իսկ նպատակը փողն է միայն այդ զարշելի էակների մէջ։ Այդ նպատակին հասնելու համար նրանք պատրաստ են սպանել, թունաւորել, հարազատ եղբայրների մէջ երկպառակութիւն ձգել, թշնամացնել միմեանց դէմ ամուսիններին, թշնամացնել որդիներին ծնողների դէմ, երկպառակութիւն սերմանել ազգի անդամների միմեանց մէջ, սպանել ազգի մէջ ազգութեան գաղափարը և այլն և այլն։

Եզուիտութիւնը այն պատճառով վտանգաւոր չէ, որ նա կաթօլիկութիւն է, բայց այն պատճառով որ նա եզուիտութիւն է։

Մենք գիտենք որքան ազգասէր են և ազգին նուիրված մեր հայ-կաթօլիկներից շատերը, ճանաչում ենք կաթօլիկներից շատերին, որոնք աւելի էլ ազգասէր են, քան թէ լուսաւորչականներից շատերը, չենք կարող մոռանալ որ հայ-կաթօլիկների շրջանից են դուրս եկել Բէշիկթաշլեանի պէս բանաստեղծներ, Ալիշանի, Այտընեանի պէս գիտնականներ և այլն։

Բայց ով որ հայերից ենթարկվել է եզուիտութեան ազդեցութեանը, նա միշտ օտարացել է իր ազգութիւնից, սկսել է ատել իր ազգութիւնը, սկսել է ուրանալ թէ ինքն հայ է։

Եզուիտները դրանով վտանգաւոր են որ իրանց ձևացնում են բարեպաշտ, կրօնասէր և բարոյական, բայց իսկապէս ոչինչ կրօն չունեն, այլ նրանց Աստուածը միայն փողն է և բացի սորանից նրանք ամենաանբարոյական մարդիկ են։ Եւրօպայում պատահել են ամենասարսափելի պրօցէսներ եզուիտների դէմ, նրանց հրէշաւոր անբարոյականութեան պատճառով։ Այդ արտաքին բարեպաշտութեամբ նրանք գրաւում են ոգէս ամբոխը։ Մի ուրիշ վտանգ ներկայացնում է եզուիտութիւնը դրանով որ ահագին գումարներ ունի այդ միաբանութիւնը և փողով գրաւում է հասարակութեան չքաւոր դասակարգը, որպէս զի վերջը նրան աւելի լաւ հարստահարի։

Ամեն պետութիւնները հասկացել են այդ կեղծաւոր, անբարոյական, կրօնի դիմակով ծածկված արիւնարբու հարստահարիչներից բաղկացած, առևտրական-կրօնական միաբանութեան ամեն երկրի մէջ ներկայութեան վտանգը։ Եւ այդ պատճառով եզուիտները աքսորված են Ֆրանսիայից, Գերմանիայից, Աւստրիայից, Իտալիայից,

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՅԻՑ

—

Կ. Պօլիս, 13 Նոյեմբերի

Գիտեմ որ ձեզ շատ հաճելի է հայոց գործից լուրեր իմանալու. քանի մենք այդ լուրերով ժամանակ անցնենք, բայց համբերութեան դիմենք և մի քանի խօսք ասենք այդ մասին։ Քաղաքիս բարձրագոյն շրջաններում այս օրերս պտտող և լրագիրների մէջ էլ դուրս եկող խօսքերը հաստատում են, որ այս օրերս կը հրատարակվի սուլթանի ֆիրմանը Յարութիւն Դադեանին Հայաստանի փոխարքայ նշանակելու և ամբողջ մի դաս հայ պաշտօնեաներ այնտեղ ուղարկելու վերաբերութեամբ։ Այս լուրերը կարողացայ ստուգել զանազան միմեանց բոլորովին ներհակ աղբիւրների մէջ և ամեն կողմից նոյն հաստատութիւնը լսեցի։ Ասում են, որ այսպիսով Թիւրքիան ուզում է ճշգիւ հետևել 61-երորդ յօդուածի խօսքին, որ է, պարբերաբար հաշիւ տալ մեծ պետութիւններին այն ռեֆօրմների մասին, որ կը մտցնէ հայաբնակ գաւառը։ Հետևաբար Սայիդ փաշայի կաբինետը համոզվելով, որ էլ անհնարին է զանցառնել Բերլինի տրակտատի յիշեալ կարևոր կէտը, ձգտում է ձեռնարկել Թիւրքիայի վրա դրած պարտաւորութեան կատարման ինքնաբերաբար կերպով, էլ առանց գործին որ և է օտար միջամտութեան և ճնշման տեղիք թողնելու։ Առաջի անգամի համար այսչափն էլ վատ չէ, որովհետև սորանով գոնէ Թիւրքիան իրապէս խոստովանած կը լինի թէ 61-երորդ յօդուածի նկատմամբ իր վրա անհրաժեշտ պարտաւորութիւն կայ Եւրօպայի կօնտրօլին և իրաւասութեան ենթարկվելու Հայաստանի վերաբերմամբ։

Այն ֆանտաստիքական լուրերը, իբր թէ Ռուսաստանը մտադիր է եկող գարնան ութսուն հազար զօրքով գրաւել Հայաստանը երեք հարիւր միլլիօն պատերազմական տուգանքի փոխարէն և այն որ իբր թէ լորդ Դիւֆերին հրաման է ուղարկել Մալթայի անգլիական նաւատորմիղին ամենայն դէպքի համար պատրաստ մնալ ռուսաց գրաւման դէմ ապահովական չափումներ անելու համար, թէև բոլորը լրագրական bavardage են, բայց իրողութիւնը առ այժմ այն է, որ այս բոլոր աղմուկներից բաւական ցնցված Թիւրքիան յօժարակամութիւն է յայտնում լուրջ կերպով հայոց ազգին բաւարարութիւն տալու համար։

«Journal d'Orient»-ի մատուցած ծառայութիւնը այս բոլոր հայկական տագնապի ժամանակ շատ նշանաւոր է. մօտ մի քանի հարիւր օրինակ ձրի է ուղարկում խեղճ խմբագրութիւնը եւրօպական խմբագիրներին և կաբինետներին. որչափ էլ նոր լինի այդ լրագիրը և փոքր նորա ֆօրմատը, բայց նորա մէջ ճշգիւ յայտարարված հարստահարութեանց ցուցակը ինքն իր համար է վկայում։ Դեռ գտնվում են «ազգային» ասվող լրագիրներ, որոնք յանդգնում են ինսինուացիաներ անել, ասելով թէ «Journal d'Orient»-ը իր սեփական շահերի համար է պաշտպան կանգնում հայոց դատին։ Այսչափ էլ անամօթութիւն. գիտենք թէ հինգ մի օտար լրագիր իր սեփական շահերի համար է ծառայում իր համար մի խորթ և հեռաւոր ազգին, բայց ամօթ չը լինի հարցնել այդ «ազգային» լրագիրների խմբագրութիւններին թէ իրանց քսան և հինգ տարվայ գործունէութեան ժամանակ, նրանք իրանք ո՞ր ուրիշ շահերի են ծառայեցրել իրանց հայերէն լրագիրները, բացի ամենաչօշափելի անձնական շահերից։ Յանդգնութիւն ունենալ մի օտար լրագիր, ինչպէս «Journal d'Orient» յանցաւոր գտնել հայոց հարցին ծառայելով գոնէ իր խմբագրութեան ծախսը հանելու ուզենալ,—լաւ լօգիկա է «հայկական» «ազգային» և «տիրացուական» խելքկատակ լրագիրների կողմից....

Չը բաւականանալով դրանով դեռ յանդգնում են քաղաքական հարցերի վրա եւս պօռոտախօսել, ասելով օրինակ թէ «Journal d'Orient» հայոց հարցի հետ միասին պաշտպանում է ուրիշ եւրօպական փոքրիկ մի քանի անկախ ազգերին եւս. այդ մարդիկ չը գիտեն, որ խօսելով լոկ միայն հայոց վրա «Journal d'Orient» ընաւ երբեք չի ունենայ այն եւրօպական միջազգային նշանակութիւնը, որը նա կունենայ այն ժամանակ, երբ արևելեան հարցի մէջ մասնակցող բոլոր փոքրիկ ազգութիւնների բաղդը կը կապէ մի անընդհատ հետևանքների կապով և կը ենթարկէ մի և նոյն պայմաններին ու կը տայ համահաւասար եւրօպական և միջազգային նշանակութիւն։ Բայց գիտէք թէ ինչու «Journal d'Orient» համով չեկաւ այդ ազգասէրներին. որովհետև «Journal d'Orient»-ի մասին խօսողը «Մշակն» է, այլ ոչ իրանք։

Բարգուզիմէջեա Գէորգեան վարդապետի սկանդալը շատ զբաղեցնում է այստեղ հայ լրագրութիւնը. երեւի կը գտնվեն «ազգային» և «անաշառ» պուբլիցիստներ, որոնք չեն յապաղի շուտով յանուն ազգի և պատմութեան իրանց պաշտպանողական խելօք յօդուածները նուիրել Բարգուզիմէջեանի ծեծողներին եւս։

Քննադատելը թշնամանել չէ. այս գրականական այբուբենը որչափ էլ ամօթ լինէր զարգացած հասարակութեան մէջ կրկնելը, այնչափ էլ անհրաժեշտ է կրկնութեան համար այնպիսի մի ազգի մէջ, ինչպէս մերն է, որի մէջ գտնվում են մինչև անգամ համալսարանական խմբագիրներ և թղթակիցներ, որոնք յայտարարում են առանց հանաքի՝ «թէ այս ինչ մարդը սխալ և նաև վնասակար ընթացք է բռնել իր կծու լեզուով, խիստ և անխնայ քննադատութիւններով, զրոյթով, յանդիմանութիւններով և այլն...» ինչպէս տեսնում էք տիրացուական կեղծ ուղղութիւնը և նիսիա ազգասիրութիւնը մեր մէջ այնպիսի խոր արմատներ է ձգել, որ երբ մէկը բաց է անում ամեն ինչ ներկայացնել իր իսկական դրութեան մէջ, այդ ժամանակ նորա բռնած ուղղութիւնը «սխալ» և նաև «վնասակար» են համարում։ Այդ է պատճառը, որ այդպիսի ազգասէրներ իրանց ծայրայեղ ազգասիրութիւնից մեռնելով հայոց

նրանց վաղուց արգելված է արդէն ոտք կոխել և Ռուսաստանի հողի վրա։

Բայց նոյն Եւրոպա, որ հակացել է եզուիտների միաբանութեան ներկայութեան անասելի վնասը, հանգիստ կերպով համբերում է որ նոյն հրէշները անբարոյականացնեն թիւրքաց Հայաստանը, այն բազմաշարչար երկիրը, որին, ընդհակառակն, պէտք է պաշտպանէին և ազատէին թիւրքերի կամայականութիւնից։

Ի՞նչ օգուտ որ Եւրոպան պահանջում է ինքնավարութիւն թիւրքաց Հայաստանի համար, կամենալով պաշտպանել նրան քիւրդ հարստահարողներից, բայց մի և նոյն ժամանակ զոհում է նոյն երկիրը արիւնարբու, հարստահարիչ եզուիտներին։

Թիւրքաց Հայաստանը չունի դեռ ևս մի սեփական ներքին վարչութիւն, որ կարող էր վճիռ կայացնել թէ եզուիտները աքսորվում են Հայաստանի հողից, ուրեմն հայերին մնում է միայն մի ելք եզուիտների վերաբերութեամբ՝ վարվել նրանց հետ, ինչպէս ժողովուրդը ամեն տեղ վարվում է բզէզի, դաշտային մուկի, մորեխի և այլ սրանց նման վնասակար կենդանիների հետ։ Եթէ խելք ունեն թիւրքաց հայերը, թող միանան քիւրդերի հետ և գործեն եզուիտների դէմ իրանց սեփական միջոցներով։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Պ. Կարաբէգովի խմբագրութեամբ ԹԻՖԼԻՍՈՒՄ հրատարակվող «Судебные Порядки» իրաւաբանական թերթը յայտնում է առանձին յայտարարութեամբ, որ մի քանի պատճառներով, որոնց բացատրելը խմբագրութիւնը առայժմ անհնարին է գտնում, ստիպված է դադարեցնել իր գոյութիւնը։ Եթէ եղած տարակուսութիւնները բացատրվեն, այն ժամանակ, երկու ամսից յետոյ թերթը դարձեալ կը հրատարակվի, իսկ հակառակ դէպքում փողերը կը վերադարձվեն բաժանորդներին։

—

Մայրաքաղաքի լրագիրներում կարդում ենք որ գեներալ Զերէվինի դէմ ատրճանակ գցող Նիկոլայ Սանկովսկի, Գրոդնո նահանգի ազնուական է, 28 տարեկան լէհացի է, կաթոլիկ դաւանութեան։ Վերջին ժամանակ նա բուֆետ էր պահում Մօրշանսկ քաղաքի թատրոնում։ Ասում են որ Հերցեգովինայի ապստամբութեան ժամանակ Սանկովսկի որպէս կամաւոր էր ծառայում ապստամբների զօրքի մէջ։

—

Երևելի ֆրանսիացի դերասանուհի Սարա Բերնար այժմ ներկայացումներ է տալիս Օդեսայում։ Թատրոնը միշտ լի է լինում, մանաւանդ հրէայ երիտասարդներով, որոնք նշանաւոր դերասանուհուն սաստիկ համակրական ցոյցեր են անում։

—

Նոյեմբերի 1-ից սկսեց հրատարակվել Օդեսայում մի նոր ռուսաց ամենօրեայ լրագիր «Новороссійскій Листокъ Объявленій», որի խմբագիրն է պ. Օզմիդով։

—

Ստանում ենք չնորհակալութիւններ «Եւրոպա և Հայաստան» առաջնորդող յօդուածի առիթով։

—

Վիէննայի «Ֆուրնալ դ'Օրիան» լրագիրը տպել է իր վերջին համարներում Գրիգոր Արծրունու «Սովը Թիւրքաց Հայաստանում» վերնագրով դասախօսութիւնից քաղուածներ։ Ֆրանսիական լրագիրը աշխատել է արտատպել գլխաւորապէս այն տեղերը յիշեալ գրուածքից, որոնք ամենից լաւ են ցոյց տալիս թիւրքերի գեղծումները և նրանց հալածանքները հայերի դէմ։

—

Լսում ենք որ Ներսիսեան դպրոցի հոգաբարձութիւնը կամենում է ընտրել մի տեսուչ դպրոցի համար, քանի որ դպրոցը չունի այժմ մի հատուկ տեսուչ, այլ միայն տեսչի պաշտօնակատար։ Ասում են որ տեսչի պաշտօնի վրա երկու կանդիդատներ կան. դոկտոր Աբիսողոմ Յովհաննիսեանց և վարժապետ Բաստամեանց։ Մենք մեր կողմից ձայն կը տայինք առաջին կանդիդատի համար։ Մենք կատարելապէս յարգում ենք Բաստամեանց վարդապետին, որպէս համալսարանական աբեղային, բայց եթէ Էջմիածնի ճեմարանը կայուղանում է Ներսիսեան դպրոցի աշխարհական տեսչի անհատական անկախութիւնը ճնշել, հրամայելով նրան աշակերտներից սրան կամ նրան արտաքսել դպրոցից, որքան աւելի կամայական կերպով կը վարվեն ճեմարանը և զանազան նահապետականները Ներսիսեան դպրոցի հետ, երբ տեսուչը կը լինի նրանց ստորադրեալ մի հոգևորական։

ազգի մատնիչների հետ, իւրաքանչիւր քայլափոխում գաղտնի դաւադրութիւններով և մատնութիւններով ճգնում են խորտակել նոցա, որոնք յանդգնում են ամեն ինչ հրապարակ հանել և չը թողնել որ կեղծ հայութեան անունով պղտոր ջրերում չաղ չաղ ոսկի ձկներ որսան,..

Սա է պատճառը, որ պարտաւորութիւն համարեցի այս անգամ յատկապէս զգուշացնել ձեր ընթերցողներին թէ խօսելով Կ. Պոլսի սովելոց խնամատար յանձնաժողովի վրա, քնաւ չունեմ մտքումս որ և է «յարձակում», «թշնամանք», «պարսաւ» և «կծվութիւն», այլ ուզում եմ միայն մի քանի դիտողութիւններ անել այն մարմնի մասին, որի գործունէութեան հետաքրքիր է համայն հայ ազգը։

Սովելոց յանձնաժողովի գործունէութիւնը. ասում եմ, հետաքրքիր է համայն հայ ազգին ոչ այնքան նորա համար, որ այդ ազգի գրեթէ բոլոր անդամները մաս ունեն իրանց սովամահ եղբայրների փրկութեան գործի մէջ, այլ նորա համար որ այդ մասնակցողները իմանան թէ մի մեծ ազգային տաղնապի մէջ, ինչպէս թիւրքաց Հայաստանին վրա հասած ազէտն էր, ովքեր էին ազգի բաղդը մնօրինող մարդիկ, որոնց նուիրել էր ազգը իր անպայման վստահութիւնը, և թէ որ աստիճան կարողացան նոքա արդարացնել այդ վստահութիւնը և արժանի գտնվել իրանց ստանձնած բարձր պաշտօնին։ Այսպիսի մի լուսաբանութիւն հարկաւոր է մանաւանդ նորա համար, որ Տէր մի արասցէ, մի ուրիշ ազէտ վրա հասնելու ժամանակ, ազգը արդէն տեղեակ լինի թէ ինչ հանգամանքների վրա է հարկաւոր աւելի մեծ ուշադրութիւն դարձնել ընդհանուր չարիքը աւելի շուտ և աւելի հեշտութեամբ խափանելու համար, քան թէ այն գործունէութեան եղանակը, որը ունեցել է առաջի անգամ հայոց մէջ համազգային, գործակցութեան ասպարէզ ունեցող մի մարմին։ Ուրեմն այսպիսի բանի վրա դիտողութիւններ անելը և նաև ծանր կերպով խօսելը կարող է նոյնչափ հրահանգիչ լինել միւս անգամի համար, որչափ և օգտաւէտ։

Յայտնի է, որ սովելոց յանձնաժողովը կազմված է երեք վաճառական և մի Բ. Դրան պաշտօնեայ մարդիկներից։ այս վերջինը յանձնաժողովի քարտուղարն է, որովհետև ոչ մէկը մնացած երեք անդամներից ոչ մի լեզուով գրագէտ չէ։ Սոցա արած բոլոր բացարձակ անօրինութիւնները մօտ մէկ միլիոն բուրլ գումարի հետ եղած են իրանց կատարեալ պատասխանատուութեան տակ. վասնորոյ ընդհանուր հայ ազգի առաջ յանձն առած պատասխանատուութիւնը պիտի լինի այնպիսի հաստատ հիմունքների վրա, որով պատասխանատուները ոչինչ քննադատութիւնից և հաշուէպահանջումներից բնաւ երկիւղ չը կրեն։ Տեսչ Աստուած, որ այդպէս լինի, բայց ամեն կողմից լսվող հասարակաց կարծիքը դըժբաղդաբար հակառակն է հաստատում, վասնորոյ յայտնենք նախ այն դատողութիւնները, որոնք պատկանում են այդ հասարակութեան, իսկ միւս անգամ մէջ բերենք մեր սեփական կարծիքը, որ սորա հետ միասին ուրախութեամբ կարողանանք լսել այն պատասխանները, որ կը տայ ինքը յիշեալ յանձնաժողովը։

Յանձնաժողովի մինչև հիմայ բռնած բոլորովին խորհրդաւոր և մռայլապատ ընթացքից մեծապէս դժգոհ լինելով այստեղի հասարակութիւնը, որը զրկված է այդպիսով ո և է կօնտրոլ անելու կարողութիւնից, իր հաւանական ենթադրութիւնները վարած գործի խառակութեան և անշահախնդրութեան վերաբերմամբ հիմնում է գործավարների անձնական յատկութեանց և արժանեաց վրա։ Այս տեսակէտից նայելով գործի վրա, հասարակութեան համարումը բաւական անպատատ է սովելոց յանձնաժողովի կատարած գործունէութեան որպիսութեան համար և ահա ինչպէս։

Պ. Սերովբէ Կիւլպենկեանը ճանաչված է այստեղ և այդտեղ ինչպէս մի ճշտակատար և խրատապատ վաճառական, որը նաև կէս կոպէկ մէկի վրա վոխադրելու ժամանակ, այդ կէս կոպէկը թղթի վրա փոխանակագիր գրել կը տայ։ Այսպիսի մի վաճառականական արժանիք ի հարկէ բնաւ չէ կարող կրիտերիում և պայման համարվել այդպիսի մէկի ո և է հայրենասիրական եռանդի և գիտակցականութեան, այլ գուցէ ընդհակառակը նորա բացառական կողմերի արտայայտութիւնը միայն լինի.... Այո, պ. Սերովբէ Կիւլպենկեանը այն հին վաճառականների տիպարներիցն է, որը գուցէ շատ մեծ ուրախութեամբ հազարներ կը տայ մի եկեղեցու շինութեան համար, բայց մի և նոյն ժամանակ իր հաշուէսեղեակը մտած ժամանակը, նա ոչ մի վայրկեան այնչափ չի յափշտակվի որ և իցէ պլատոնական, իդէալական զգացմունքով, որ ըստ արժանոյն չը գնահատէ թէ ինչ ասել է խնայողութիւն, տոկոս և այլն (այն էլ ի հարկէ հայկական մտքով)։ Այս այսպէս լինելու հետ միասին ակայն հասարակութիւնը շատ գոհ կը լինէր, եթէ սովելոներին «պաշտօնապէս» բաժանած մօտ մէկ միլիոն բուրլի անօրինութիւնը լինէր իրան պ. Կիւլպենկեանի ձեռքին և իշխանութեան տակ. մինչդեռ այդ գործերի բոլոր կարգադրութիւնը եղել է մի այնպիսի մարդու բացարձակ կամքի տակ, որ մարդ կը տարսի, երբ կը մտածէ ո և է հաշիւ տալ հրապարակապէս նորա անձնաւորութեան վրա. այդ անձ Աբիք Ունջեան ասվող մէկն է, որի մասին թէպէտ դուք լսած էլ չը լինէք, բայց սովելոց յանձնաժողովի մէջ նա է համ գանձապահ, համ գանձաչահ, համ ամեն ինչ։

Աբիք Ունջեանը մի տաճկական փոդրաղի է, որի գործունէութիւնը անցեալ սերբիական պատերազմի ժամանակ սկսվեց տաճկական մի գունդի ածուխավաճառի պաշտօնից և վերջացաւ բոլոր զօրաքանակի ինտենդանտի պաշտօնով։ Էլ հասկացէք.... Անցեալ տարվայ սովի ժամանակ, երբ հարկ եղաւ մի յանձնաժողով կազմել Պոլսի մէջ, մտածեցին թէ այդ յանձնաժողովի մէջ հարկաւոր է մացնել նոյնպէս և մի երկու Դրան կարող էֆենդիներ, որով տաճկական կառավարութեան կողմից որ և է խափանարար արգելքներ չը լինեն յանձնաժողովի գործունէութեան համար, վասնորոյ յանձնաժողովի չորս անդամներից երկուսը ընտրվեցին էֆենդիներ, որոնցից առաջինը եղաւ Աբիք Ունջեանը։ Ածուխավաճառից կարճ ժամանակվայ մէջ էֆենդի և անուանի հարուստ լինող մարդը, աւելի

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՖՐԱՆՍԻԱ

Պատգամաւորների ժողովի մէջ սպասում էին, որ նոյեմբերի 19-ին Գամբետտա մի ճառով աւելի ընդարձակօրէն կը բացատրի իր քաղաքական նախագիծը։ «Հավասի» ընկերութիւնը հաղորդում է, թէ կառավարութիւնը մի քանի հարցերին պատասխանելուց յետոյ, կը դադարեցնի պատգամաւորների ժողովի պարապմունքները, որպէս զի ժամանակ ունենայ մշակել վերանորոգութիւնների նախագիծը։ Այսպիսով կառավարութիւնը կը պահանջի պատգամաւորների ժողովից գումար Յունիսի արշաւանքը վերջացնելու համար և Բելգիայի, Իտալիայի և Աւստրօ-Ունգարիայի հետ առևտրական դաշնագիրների վաւերացումը։ Պատմում են, որ Գամբետտա նորից սկսել է բանակցել Ֆրէյսինէի և Լէօն Սէի հետ։ Առաջինին նա կամենում է Ալժիրիայի գլխաւորնահանգապետ նշանակել, իսկ երկրորդին դեսպան Ս. Պետերբուրգի մէջ։ Կառավարութիւնը մտադիր է Բերլինի մէջ Սեն-Վալիէի տեղ Շալմել-Լակուրին Ֆրանսիական դեսպան նշանակել, թէպէտ դեռ ևս չեն հարցրել գերմանական կառավարութեան կարծիքը այդ գործի մասին։ Կղերականները խորհրդակցում են այն հարցի մասին, թէ իրանք ինչպէս պէտք է վարվեն, եթէ ժողովրդական լուսաւորութեան մինիստր Պոլ Բեր կառաջարկի ոչնչացնել եկեղեցական բիւդժետը և եթէ մեծամասնութիւնը կը պաշտպանի այդ առաջարկութիւնը։

Պատերազմական նոր մինիստրը ուղարկեց գեներալ Սոսէին հետևեալ հեռագիրը. «Յայտնեցէք Ալժիրիայի և Յունիսի մէջ գործող զօրքերին, որ անընդհատ հոգում եմ նրանց մասին և պատրաստ եմ օգնել նրանց այն բոլոր միջոցներով, որոնք իմ ձեռքին են»։

Գամբետտա նորերում խորհրդակցեց Գրեվիի հետ մի քանի դեսպաններ նշանակելու մասին։ Այդ հարցի վերաբերութեամբ դրական վճիռ չէ կայացրած, գոնեա լրագիրներին ոչինչ յայտնի չէ։ Ֆրանսիական մամուլը սկսում է անբաւականութիւն ցոյց տալ նոր մինիստրների գաղտնապահութեան համար։ Լրագրական բէպորտէօրներին այլ ևս մատչելի չեն նախկին «հաստատ աղբիւրները» և նրանք ստիպվում են առանց տեղեկութիւնների կառավարութեան դիտաւորութիւնների մասին։

Ինչպէս յայտնի է, Վիկտոր Հիւգո փարիզի խորհրդարանի ներկայացուցիչ է սենատի մէջ և շուտով նոր քուէարկութեան պէտք է ենթարկվի։ Արմատականները առաջարկեցին Հիւգոին ընտրութիւնների ժամանակ նրան քուէարկել, եթէ նա յանձն կառնի առաջարկել, որ սենատը փակվի իբրև մի հիմնարկութիւն, որ չէ համապատասխանում ժողովրդական սահմանադրութեան ոգուն։ Հիւգոն այդ առաջարկութիւնը անողներին հետևեալ պատասխանը տուեց՝ «Կարող է լինել լաւ սենատ, ինչպէս կարող է լինել և վատ պատգամաւորների ժողով։ Լուի Ֆիլիպպի ժամանակ սենատը ժողովրդի հաւատարմութեանը արժանացաւ, մինչդեռ պատգամաւորների ժողովը կորցրեց այդ հաւատարմութիւնը։»

Իտալիայի և Ֆրանսիայի յարաբերութիւնները ներկայումս բարեկամական չեն։ Ասում են, որ փարիզի մէջ իտալական դեսպան կը նշանակվի Զիալդինի, որի անձնական յարաբերութիւնները Գամբետտայի հետ բարեկամական են։ Մինչև նոյեմբերի 19 Գամբետտա չը տեսնվեցաւ օտար դեսպաններից ոչ մէկի հետ։ Նա միայն ուղարկեց նրանց իր այցելումը և շրջաբերականը։ Նոյեմբերի 15-ին դեսպանները այցելեցին Գամբետտային, բայց չը գտան նրան արտաքին գործերի մինիստրութեան մէջ։

ՑՈՒՆԱՍՏԱՆ

Ցունական պարլամենտի արձակելը այնպիսի մի ժամանակ, երբ հասարակական կարծիքը անհամբերութեամբ սպասում էր նրա պարապմունքների սկսելուն, աչքի առաջ ունենալով, որ կառավարութեան քաղաքականութիւնը պէտք է դատապարտվէր, ամենքի վրա ծանր տպաւորութիւն գործեց։ Ընդհանուր անբաւականութիւնը հետզհետէ մեծանում է և, որովհետև